դրուիլն ու տարուիլը մինչև Պրուսա, ու անկէ գիշերանց փախուստ տալով Պոլիս հասնիլը և ի Թաքըստեան ապրիլը ու Թաքստոցէն բռնուելով իբրև մահապարտ չղթայակապ բանտարկուիլը, Ֆէօփրիւլի վէզիրին առջև տարուիլն ու հարցաքննուիլը, և Մարտիրոս Ղրիմեցիի և Յոհան Իուհիճանի և նոյն ինքն Երեմիայի ջանքերով արձակուիլը բանտէն. ապա Ս. Յակոբի Յոյներէն ետ առնուիլը, տարիուկէս զայն իրենց տիրապետութեան ներքև պահելէն ետք։ Այս դէպքերուն կը զուգադիպին Մահտեսի Ամբակումի մահը (23 Նոյ. 1658), մինչ տակաւին կալանքի տակ էր Եղիազար, ապա՝ հակառակ ազգի իշխանաւորներու կամքին՝ Թումա Բերիացիի Կ. Պոլսոյ պատրիարքութիւնը ձեռք բերելը ու եղերամահ սպանութիւնը բանտին մէջ (1 Օգստ. 1658). Նաև Եղիազարի խորհրդով Մարտիրոս Ղրիմեցիի Պոլսոյ պատրիարքական աթոռը բարձրանալը ու Ղազար Սեբաստացիի՝ զանազան սադրանքներով իրեն յաջորդելը, և այլն։ Այս դէպքերը իրենց բոլոր պարագաներով կը պատմէ Զամչեան(1), միակ աղբիւր ունենալով Երեմիայի Տարեգրութիւնը, ինչպէս ինք կը վկայէ. «Գրեաց (Զէլէպի) զպատմութիւն անցից իւրոյ ժամանակի՝ ստուգութեամբ և հաւատարմութեամբ, յորմէ առեալ և մեր՝ աւանդեցաք ինչ ինչ ի ԼԲ. գլխոյ մինչև ցայսր» (էջ 723)։

Այս անցուդարձերը նոյն մանրամասնութեամբ կ'աւանդէ նաև մեր Օրագրութիւնը, որուն Տարեգրութեան հետ ունեցած առընչութիւնն ու անոր իբրև հիմ ու աղբիւր ծառայած ըլլալը աշխատած ենք ցոյց տալ՝ Զամչեանի Պատմութենէն ու Օրագրութենէս յառաջ բերելով համեմատական հատուածներ(2)։

---

(1) **Պատմութիւն Հայոց**, Հատոր Գ. Գլ. ԼԲ-ԼԹ։
(2) **Շողակաթ**, 1913, էջ 49-52։